

ՍՈՒՐԷԱՆԳԱԿԻ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՋԳԱՅԻՆ ՎԵՐՉՈՒԹԵԱՆ ԿԻՐՈՆԱԿԱՆ ԵՒ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ.

Աղբ. պատկառելի երեսփոխանութեան քուէովն ի պաշտօն կոչուած Վարչութիւնս իւր դործոց ասպարիզին մէջ ոտք կոխելու ժամանակ, առաջին պարտաւորութիւն մը ունի կատարելու, այն է յայտնել իւր խորին երախտագիտութիւնը ի մասին այն վստահութեան տւանդին, որով Աղբը բարեհաճեցաւ զնա պատուել իւր օրինաւոր երեսփոխանութեան միջոցաւ:

Վարչութիւնս քաջածանօթ արդի դժուար պարագայից, որոց մէջ իրեն վիճակեցաւ Աղբին դործոց մատակարարութիւնը, լիովին կղզայ թէ սրբան ծանր է այսպէս տարօրինակ ժամանակի մը մէջ Աղբ. վարչութեան ղեկն ստանձնել: Բայց նոյն իսկ այս պարագանքու դժուարութեան նկատմամբ ներքի չէր իրեն մերժել Աղբային պատկառելի երեսփոխանութեան հրաւերն, առանց նուիրական պարտաւորութեան մը դէմ՝ մեղանչելու:

Ահա այս զգացմամբ է որ նորընտիր Վարչութիւնս, Աղբին վստահութեան վրայ դնելով իւր յոյսը, պաշտօն կընդունի:

Կրօն. եւ քաղ. ժողովները բերկրութեամբ կը տեսնեն նաեւ՝ որ Վարչութեան այս ծանր բեռը, զոր Աղբին սէրը եւ Աղբային երեսփոխանութեան վստահութիւնը իւր թիկնաց վրայ կը դնեն, ոչ նուազ պիտի թեթեւնայ, քանի որ բարեբաղդութիւն ունի Տէրութեան եւ Աղբին ընդհանուր վստահութիւնն ու համարումը իրաւամբ վայելող Ամեն. Ներսէս Ս. Պատրիարք Հօր քաղցր հովանւոյն ներքեւ պաշտօն վարելու, եւ քաջայոյս է՝ որ Նորին Սրբազնութիւնը իր ղօրաւոր եւ խոհական անակցութեամբը պիտի ուղղէ ժողովոց քայլերն Աղբային յառաջագիմութեան ասպարիզին մէջ:

Արդ. Վարչութիւնս իւր յանձն առած ծանր պաշտօնին ձեռք դարնելու միջոցին, պարտք կը համարի իւր ընթացից ողին եւ սկզբունքն ալ Աղբին հաղորդել ներկայ յայտարարութեամբ:

Նախ, ըստ իւր պարտաւորութեան, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեանց անարատութեան եւ անխախտութեանը հսկելու եւ կրթական զգացումն զարգացնելու մտադիր պիտի ըլլայ:

նոյնպէս նաեւ Աղբային ընդհանուր շահուց, կալուածոց եւ ամեն սեպհականութեանց պաշտպանութեան եւ դատարարականութեան զարգացման համար պետք եղած դարմանները պիտի խորհի եւ անոնց դործադրութեանը պիտի հսկէ:

Վարչութիւնս, իւր սուղ ժամերն աւօրեայ ընթացիկ եւ անհատական խնդիրներով դրաւել նստել համար, Կրօն. եւ քաղ. մասնաժողովներու կազմութիւնը որոշեց, պաշտօն տալով անոնց, որ շաբաթը մէկ օր աւօրեայ եւ անհատական մասնաւոր խնդիրներու կարգադրութեամբն զբաղելով, եւ անոնց նախաքննութիւնները ընելով յատուկ տեղեկագրով ժողովոց վաւերացմանը ներկայացնեն, եւ խառն խնդիրները, Խառն մասնաժողովոց ձեռքով Խառն ժողովոյ ներկայացնեն:

Այս դրութեամբ Վարչութիւնս պատահական մասնաւոր խնդրոց զբաղմունքէն ազատ մնալով, ժամանակ եւ դիւրութիւն պիտի ունենայ Աղբին կենսական եւ հանրական կարեւորութիւն ունեցող խնդիրներով զբաղելու:

Վարչութեան միւս ձեւերուն կազմութեանը գալով, Վարչութիւնս մեծ հոգ տարաւ որ այս ձեւերն, որոնցմով Սահմանադրութիւնը ուղած է ապահովել իւր հիմնական սկզբունքներէն մին, այն է աշխատութեան բաժանման սկզբունքն, այնպիսի կազմաւորութիւն մը ստանան, որով կարելի լինի անցեալէն աւելի ընդարձակութիւն տալ իւրաքանչիւր ձեռնհասութեանը՝ իրեն պատկանած գործոց մատակարարութեան մէջ, եւ քաջ գիտնալով միանգամայն որ ժողովի մը անկարելի է արդիւնաւորապէս գործել առանց համաձայնութեան զինքն կազմող տարերաց մէջ, Վարչութիւնս, իւր բոլոր ուշադրութիւնը նուիրեց ընտրութեանց մասին, որպէս զի վերոյիշեալ վարչական ձեւերն, զգօն, ազգասէր, կարող, նա մասնաւոր սկզբամբ իրարու համամիտ եւ համակիր տարրներէ բաղկանան:

Այսպէս ուրեմն կազմած ըլլալով իւր վարչական մեքենայն, վարչութիւնս բնաւ ջանք պիտի չիսնայէ Աղբին շահերն անձնութեամբ պաշտպանելու, եւ Աղբը անդորր վիճակի եւ յառաջագիմութեան շուղին մէջ առաջ տանելու:

Իւր առաջին հոգը պիտի լինի Աղբին կրթութեան ծաւալումը, զանի հաստատուն հիմանց վերայ աւանդելով, վասն զի հոն պահուած է Աղբին ստղագան:

Պատրիարքարանի ելեւմուտքն կանոնաւորելու մտադիր պիտի լինի, հասութից եղանակը բարեփոխելով եւ ծախքերն իմաստութեամբ տնտեսելով:

Աղբային դատարանին կանոնաւոր վիճակ մը տալու համար, բաց ի կրօնական անփոփոխ օրինաց, դատարարութեան օրինաց ծրագիր մը պատրաստելու եւ ա-

նոր իրաւասութեան ենթարկեալ խնդիրներն, առանց երկարաձգման արդարապէս կարգադրելու համար, պէտք եղած միջոցները գտնելու պիտի աշխատի:

Ազգային վանօրէից արդիւնաւոր դիրք մը տալու եւ յօգուտ Ազգին ծառայեցնելու միջոցները պիտի խորհի, եւ հետեւապէս այն միաբանութիւններն որք Ազգին անձնութեամբ կը ծառայեն, պաշտպանելու եւ նոցա ձեռնտու լինելու փոյթ պիտի ունենայ:

Ինչպէս նաեւ պիտի խրոխտուէ անխտիր այն ամեն կարգէ անձինք, որք թէ մասնաւոր, եւ թէ հաւաքական ձեռնտութեամբք ազգին օգտակար կը հանդիսանան:

Եկեղեցականաց դիրքն ալ ազնուացնելու եւ բարձրացնելու պիտի ջանայ, անոնց դէմ՝ յարուցեալ անիրաւ յարաւանքները եւ անարգական խրոխտմանն արդիւնելով եւ եկեղեցական դասուն արդար իրաւունքները պաշտպանելու միջոցները խորհելով եւ ի գործ դնելով:

Արարատեան Մայր Աթոռոյ եւ անոր վեհափառ Գահակալին հետ յարաբերութիւնները բարուք եւ օգտակար վիճակի մէջ պահելու ուշ պիտի դնէ:

Վարչութիւնն քաջ գիտելով որ Ազգին քաղաքականութիւնն ու շահերը մի են եւ անբաժան ամեն ազգայնոց համար, եւ թէ մասնաւոր անհամաձայնութիւնները աւելի թիւրիմացութեան հետեւանք են, քան թէ սկզբանց տարբերութենէն կը յառաջանան, յատկապէս հոգ պիտի տանի այդ թիւրիմացութիւնները պարզելու եւ իւր ամեն գործոց համար այնպիսի միջոցներ ձեռք պիտի առնու, որ Սահմանադրութեան տրամադրութեանց եւ Ազգ. Ժողովոյ որոշմանց ըստ ամենայնի համաձայն լինին:

Փոխադարձաբար, Վարչութիւնն ալ իրաւունք ունի Ազգայնոցմէ պահանջելու անկեղծ աջակցութիւն եւ մանաւանդ. կատարեալ հնազանդութիւն առաջի օրինաց եւ օրինաւոր որոշմանց. վասն զի առանց այս փոխադարձ պայմանաց անկարելի է տեսնել Վարչութեանն եւ Ազգին մէջ այն գոլելի եւ յարատեւ ներդաշնակութիւնն որոյ վրայ խորոխտած են Ազգային բարօրութեան եւ յառաջադիմութեան ամեն յոյսերն:

Ազգային Վարչութիւնը պարտաւոր ըլլալով պատկառելի հանդիսացնել ընդհանրութեան կամօքն ու ազգին վստահութեամբն ստանձնած իշխանութիւնն, որոշած է բնաւ կուսակցութեանց եւ յախուռն կրից անձնատուր չընել իւր ազդեցութիւնը, այլ ամեն օրինաւոր միջոց ի գործ դնել Ազգային Վարչութեան պատիւը պահպանելու համար ընդդէմ ամեն տեսակ

ճնշմանց, խռովայոյզ շարժմանց եւ ապօրինաւոր յարձակմանց: 30 յուլիս 1876

Ի Դիմաց Կրօն. Ժող. Ազգ. Վարչութեան

Ասեճադպիր

Ասեճապետ

Զակար վրդ. Աշոտ փախագիւսն Խորէն վարդ.

Ի Դիմաց Գաղ. Ժող. Ազգ. Վարչութեան

Ասեճադպիր

Ասեճապետ

Նուրեան

Ս. Ապրօ

Փունջ Թ. 1099. Օգոստ. 4.

Մեծայոյս եւ ակնդէտ կսպասեմք տեսնել՝ զի Թուրքիոյ Հայոց Կեդրոնական Ազգային Վարչութիւնն՝ իւր յայտարարութեան համաձայն անկեղծութեամբ յարատեւելով եւ գործնական արդիւնաւորուելով՝ կյաջողի ապացուցանել իւր զգացումը եւ իղձերը՝ եւ պարտուպատշաճ շնորհակալութեանց կարժանանայ:

ԿՏԱԿ ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐԱՅԵԱՆՅԻ.

Պրուսայի ազգայնոց երեւելիներէն Ամիրայեան Գրիգոր աղայ՝ որ այս օրերս կիքեր է մահկանացու կենաց ընթացքը, կտակաւ թողեր է 100000 դուրոշ՝ ամուսնոյն, 30 000՝ Պրուսայի եկեղեցւոյն, եւ 30,000 դուրոշ ալ՝ Ս. Էջմիածնի Ս. Երուսաղիմայ, Աղթամարայ, Արմաշի եւ իւր ազգականաց համար:

Հանգուցեալն այսպէս ոչ միայն իւր անունը կանամահացուցանէ, այլեւ ազգու օրինակ մը կը թողու ուրիշ ձեռնհաս ազգայնոց:

Արժան է, որ տարին զէթ մի անգամ հանդիսաւոր յիշատակութիւն ըլլայ Պրուսիայի եւ այլ կտակընկալ վանօրէից եկեղեցեաց մէջ:

Նոյն: